Տասն և չորսերորդ տողում «ողորմութիւն» բառի ընդգծուած վերջաւորութեան մէջ թի միասին, ւ տողի գլխին։

21. *Կեչառոյքի Ս. Աստուածածնի հարաւային պատի վերայ, երեք լուսամուտների տակ, Գրիգոր Մագիստրոսի մեծ արձանագրութիւնը 1051 կամ 1054 թուականից, եթէ առաջին տողի «հինգհարիւրերրորդի» բառի մէջ ընդգծուած երկրորդ r սխալմամբ չէ գրուած։*

1· + Ի հինգ հարիւրերրորդի ամի թուականութեանս թորգոմեան ի թագաւորութեանն ս՛ք եւ ինքնակալ թագաւորին Կոստ(ա)նդեա Մաւնումախին բերաւ ոսկի մատանիս, զոր հզաւրին եւ առաքինոյն բա(րե) |

2· պաշտին Գրիգորի մագիստռոսին կիտաւնտին եւ դուկին Վասպուրականի եւ Տարաւնո Արշակունոյն եւ Հայկազն(ո)յն մեծաւ աշխատութ՛ք ազատեալ էր զմեծ եւ զհռչակաւոր եկեղ(ե)

3· ցիքս իւր եւ ոչ այլ ինչ հայցէ, բայց միայն ազաւթս առնել ս՛ք եւ ինքնակալ թագաւորին Կոստանդեայ· ընդ նմին ծա(ռա)ին Գ՛ի Գրիգորոյ եւ որդոց իւրոց եւ յիշատակ կարգեալ յեկեղեցիքս Կ

4· եւչառուաց ցուր (sic) մագիստռոսն կենդանի է ամեանեն (sic) շաբաթ աւր զժամն Հասանա արացեն (sic) *(արդեօք ա ս-ի հետ միացած, չի նկատւում)* անխափան· եւ յետ եղիցն մագիստռոսին արացեն (sic) անխափան· արդ որ ոք այսմ վճռի հաստատնո խափանել ջանա թ |

5· ե առաջնորդաց ոք իցէ կամ յիշխանաց կամ ի քահանայից այնպիսին Ց եւ ԺԸ հայրապետացն նզովեալ եղիցի եւ բաժինն ընդ Յուդայի եղիցի եւ ընդ տիրասպան քահանայիցն· եւ այս գիր մեր է Յովանիսի շնորհն ԱՅ ԲՂ |